ԿԻԼԻԿԻԱ

ՀԱՆԳԷՍ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ 1874 ՀՈԿՏԵՄԲԵՐ 30 ԹԻՒ 4

հանդարտ կեանք մը կվարէր. Քօթերնիկ՝ իր պարտաւորութիւնները կը կատարէր, աղքատ հիւանդները ձրիաբար կը խնամէր, և ժամանակին մեծ մասը աստղաբաշխութեամբ կ'անցընէր. 30 տարուան եղած ատենն էր որ, աշխարհիս դրութեան վրայ ունեցած կարծիքը հրատարակեց, և գրեց՝ ըստ Ֆրանսէսքօ Մարիոյ անուն հռչակաւոր գործը:

Ցայտնի է թէ Քօբերնիկի գրածը, նոյն ժամանակի կարծեաց բոլորովին հակառակ էր. որով խիստ դժուար էր, անկարելի է չըսելու համար, զանի հրատարակել: Մինչեւ այն ատեն, ի բաց առեալ Պիւթագորեանց հին դպրոցէն, աշխարհիս կեդրոնը կկարծէին երկիրս, և մարդս ալ, բոլոր ստեղծագործութեան սկիզբն և վախճանը: Ցան և հինգ դարերէ՝ի վեր բոլոր կարծիքները, բոլոր համոզումներն այս սկզբան վրայ հիմնեալ էին: Քօբերնիկ, երկիրն իր դարաւոր հիմէն տապալելով, արբապղծութիւն գործած կըլլար. յայտնի է թէ այսպիսի յեղափոխութիւն մը ինչ դժուարութեանց և խոչընդոտներու կը հանդիպէր, ինչպէս որ եղաւ, և պիտի ըլլայ միշտ այնպէս նոր ճշմարտութեանց համար:

Ա յս պատճառաւ Քօբերնիկ չհամարձակեցաւ իր գործը հրատարակել, արդարեւ տպասէց երեսուն (30) ամբողջ տարիներուն մէջ, անդադար իր գործն աչքէ ան-

ցուց, սրբադրեց, կրկին սրբադրեց և վիճաբանեցաւ անդադար այս խնդրոյն վրայ։

Ի՛նչ ապրուս օրինակ ապիսին խմբագրաց և գրպետաց, որ հաչէ երկիցն կմպանձն ատաւօպոն գրեհաներս և հրատարակելէ յոդուածնոյն վրայ։

Երեսուն տարիներէ յետոյ, եթէ այս մեծ աստղաբաշխը, հրատարակեց իր դործն, այն ալ իր բարեկամաց և իր կարծիքըն ընդունողներուն ստիպմամբն էր։ Ըստ առածոյն թէ աւելի օգտակար է փոխանակ Աստուծոյ դիմելու, իր Սրբոյը դիմել, Գոբերնիկ ալ իր գործը, նոյն ինքն Պապին նուիրեց, որոյ մէջ կըսէ թէ, երէ ընդունելի ըլլայ և ոչ ընդհանրապէս ամենուն, Ս. Գրոց դանազան խօսքերն ատ ի ղարաղոր գործածել ձուա մեկնութիւններով, կանարգեմ նոցա յարձակողներն, որովհետև Մաթեմատիկական ճշմարտութիւն է, ի նոյն մաթեմատիկա- գիտից կողմանէ պատուելու են։

Ալդարեւ Գոբերնիկ կարող չեղաւ իր հրատարակութեան հետեւանքը տեսնել, գործին ամբողջ տպագրութիւնը վերջացած օրը մեռաւ. որոյ վրայ Երկրիս-շարժումը վարդապետող բոլոր գրոց ընթերցումը դատապարտուեցաւ։

Կալիլէ, նոյն դարուն վերջերը ծնելով, Աստղաբաշխութեան որչափ աշխատութիւն տուած ըլլալն սովրելու համար, պէտք է ամբողջ վարքը գրի առնել որ խիստ երկար է։ Շատ չարչարուեցաւ այս հռչակաւոր ծերունին, շատ ցաւ, տառապանք քաշեց, դի իր դարուն, աստղաբաշխութիւնը մեծ հալածանք կրեց, երկիրը՝ շարժման մէջ դնելուն։

Եօթանասուն տարեկան ծերունին, Կալիլէ, որոյ կպարտաւորինք, ճոճանակին, ջերմաչափին, հեռադիտին և խոշորացոյցին գիւտն, այն որ իր օրերն ու գիշերներն աշխարհիս դրութիւնը սովրելու անցուցած է, որ աստղաբաշխութեան ամենէն գլխաւոր և կարեւոր կէտերը գտած է, այն, որ վերջապէս ստեղծագործութեան ճանաչման համար իրմէ նախորդաց ամենէն աւելի աշխատած է, ստիպուեր է, ձմեռ եղանակին մէջ և տարափոխիկ հիւանդութեանց տիրելու առեն, Հռովմայ մէջ բանտարկուիլ, պատճառ բռնելով թէ իր հրատարակած ճշմարտութիւնները հերետիկոսութիւններ էին։

Ձինքը հերետիկոս և խաբեբայ կանչելնին լսեց. տեսաւ իր գրքերուն ականներու մէջ ամենայն անարդանօք նետելնին. մշտընջենաւոր աքսորի դատապարտուեցաւ, իբրեւ պատիժ և

իբրեւ զղջում երեք ամբողջ տարիներ, չաբաթն անգամ մի, ապաշխարութեան եօթը սաղմոսները բերնուց կարդալ։

Հռչակաւոր Ներսէսին, դատաւորներէն իր վճիռն ընդունելու առեն, ծնկանց վրայ ինկած, հետեւեալ կտորը կարդացընել տալին, թէ,

« Ես կալլիլէս կալիլէի, եօթանասուններորդ հասակիս մէջ, կամօքս և յօժարութեամբս դատուելով Ձեզի, և Ձեր առջեւ ծունր իյած, դատաւորացդ, իշխանացդ, եպիսկոպոսացդ ներկայութեան, կանիծեմ և կանարգեմ անկեղծ սրտով և ճշմարիտ հաւատքով, քարոզած սխալներս և հերետիկոսութիւնները (որ են երէքս շաբաթուն և Աբեւաւն անշաբաթութիւնը)։ կերդնում որ ապագային ոչ այսպիսի խօսք բերնէս պիտի արտասանուի, և ոչ պիտի հրատարակեմ, և եթէ մինչեւ անգամ, այս վարդապետութիւնը կամ կարծիքը քարոզող հերետիկոս մը ճանաչեմ կամ հանդիպիմ, պարտաւոր եմ և պիտի ճնամ, անմիջապէս Ձեզ իմացնելու . . . . . »։

Ընթերցողաց կթողում թէ ինչ աստիճան բարոյական ցաւ էր, այս ծերունուն վերոյիշեալ բառերն արտասանել։ Մարդուս սիրտը կխռովի այս տողերը կարդալով, որ կատարուած է 1633 յունիս 22ին։ Արդարեւ խեղճ ծերունին, ինը տարի աքսորուած ճնալով 1642 յունվար 2ին մեռաւ, որ տարին ծննաւ նկատուն։

Ինչ ահռելի տարբերութիւն. այսօր ամէնուն համարձակութեամբ և առանց վախի կհաստատենք թէ երէքս կը շարժէ, և աւելցնել բաւական հեռ թէ, երբ մինչև անգամ քոլոր մարդկային սերը պիտի ընդհակառակը ըլլ երէքս դառնար, անկարելի է քոլոր մարդոց ուշ դնել արձնելն, այլ, նոցա՝ երէքս հետ դառնալուն։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

—

Գ.

Ա. Ի՞նչ են մարդուս ակռայներն.

Բ. Մարդուս ակռայներն ալ մարդոյս մարմնոյն մէջ գտնուող 206 հատ ոսկորներուն նման փոքրիկ ոսկորներ են։

Ա. Ընդ կըլլայ թէ, մարդուս ականջներն, ընդ ամենը 206 չէ։

Բ. Ոչ, որովհետեւ ականջներն ալ միատեղ հաշուելով, կըլլան 238 հատ։

Ա. Ուրեմն, քանի հատ են ականջները։

Բ. Մարդուս ականջներուն թիւն է 32, որոնց 16ը, վերի երկու ծնօտներուն վրայ, ամեն մէկ ծնօտին վրայ 8 ական հատ, և 16 ալ վարի ծնօտին վրայ չարուած են։

Ա. Քանի՛ տեսակ ականջ ունի մարդս։

Բ. Չորս տեսակ.

Ա. Որոնք են.

Բ. Ա. Մկրատի նման, կոթով, տափարակ և ծայրերնին խիստ բարակ, վերի երկու և վարի մէկ, այսինքն երեք ծնօտներուն վրայ չարուած առջեւի չորսական ականջներն, որ ըսել է 8ը հատ. այս առաջին տեսակ 8ը հատ ականջներուն արմատը մի է։

Բ. Ասոնց քով կը գտնուին երկու կողմէն մէկ մէկ հատ կոթով ականջ կոչուածներն, ամեն մէկ ծնօտին վրայ 2 ական հատ. որոնց թիւն է 4, և արմատներն ալ վերիններուն նման մի է։

Գ. Ասոնց քով կգտնուին, երկու կողմէն երկերկու վոքր կամ կեղծ խոչոր, ծռոթ ականջ կոչուածներն, որոնց թիւն է 8, չորսական ամեն մէկ ծնօտին վրայ. ասոնց արմատն երկու է։

Դ. Վերջապէս վերջին երեք մեծ ելլող ականջներն, ամեն մէկ կողմէն, որոնց ամենուն թիւն է 12, և ասոնց արմատն երկուքէն աւելի է։

Ա. Երբ կծնին մարդուս ականջները.

Բ. Մարդուս ականջները կծնին, 6 ամսու ըլլալէն մինչեւ 23 տարեկան հասակին մէջ։

Ա. Ինչպէ՞ս.

Բ. Ա. Մարդուս առաջին 8ը հատ կարիչ ականջներն, որք կկոչուին նաեւ կոպէ ակոյ, կծնին նախ վարի ծնօտի առջի երկուքը, 6 ամիսէ սկսեալ մինչեւ 10 դ. ամիսը. 15 օրէ կամ 3 շաբաթէն, վերի ծնօտի առջեւի երկուքը կծնին, յետոյ երկու վարիններն և վերջապէս երկու վերիններն յաջորդաբար կտեսնուին.

Բ. 12 էն մինչեւ 14 դ. ամիսը, նախ վարի և յետոյ, վերի 4 կոտրող ականջներն, որոնց կը յաջորդեն.

Գ. Առաջին 8 մեծ ականջները, չորս վարի և չորս ալ վերի ծնօտին վրայ որոնց ամենը կըլլայ քսան։

Ա յս առաջին քսան ակռայներն ընդհանրապէս 24 կամ 30 ամիսներու մէջ կծնին, որք թափելով, երկրորդ անգամ ծընեընուն, նախնական, կոչի կամ ժամանակաւոր ակռայ կկոչուին: երբ տղայ մը իր չորրորդ տարին կրացնէ, երբեմն ալ աւելի ուշ ամեն մէկ ծնօտին վրայ երկու նոր խոշոր ակռաները կծնին, որք թափելու կամ փոխուելուս ենթակայ չըլլալնուն հաստատուն ակռայ կկոչուին: Տղուն եօթներորդ տարին առաջին քսան ակռայները կթափին որ ատեն կսկսի երկրորդ ակռայածնութիւնը, հետեւեալ միջոցներուն մէջ. ինչպէս եօթներորդ տարիէն սկսեալ մինչեւ 9 դ. տարին կծնին առաջին 8 ը հատ կտրիչները: 10 դ. տարին, առաջին կոտրողն, որ ամենէն փոքր ինչ պղտիկ է. 11 դ. տարին առաջին խոշորները. վերջապէս 18 դ. տարիէն մինչեւ 25 դ. տարին կծնին վերի խոշոր ակռայներն, որով կըրանայ ակռայծնելութեան գործողութիւնն: Ասոր համար է որ վերջի ակռային կկոչուի նաեւ ակռայ իմաստութեան:

Ա. Ի՞նչ է ակռայներուն պաշտօնը.

Բ. Ակռայներն, որոնց թիւն է ըսենք 32, և տեսակն 3, երեք տեսակ գործողութեան կծառայեն, կոբելը. կոբելը, և ձամբլը:

Կոբող ակռայներն են, երկու վերի և վարի մէկ, երեք ծընօտներուն, առաջին չորսական ակռայներն, որ ըսել է 8ը հատ:

Կոպրող ակռայներն են ատոնց քովի երկու ծնօտներուն, երկերկու ակռայներն, որ ըսել է 4 հատ:

Ծամող ակռայներն են ատոնց քովի երկու ծնօտներուն, մընացորդ 20 ը:

Ուստի, խօսքերնիս եզրակացնելու համար, կըսենք թէ մարդուս 32 ակռայները կտարբերին իրարմէ տեսակաւ, ձեւով և գործողութեամբ: Որք են տեսակի կողմանէ ըսե, ձեւի և գործողութեան կողմանէ եր:

Կը մնայ մեզ խօսիլ ակռայներուն Առողջաբանութեան վրայ, զոր պիտի ընեմք յաջորդիւ:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱԽՆԻ ԻՌԼԱՆՏԱՑԻՔ

Իռլանտա կամ Այրլէնտ, ինչպէս որ աշխարհագրութիւն գիտցողներուն ծանօթ է, Ովկիանոսի մէջ և Ինկլիզէական ա-

ըեւմտեան կողմը մեծկակ կղզի մըն է. Անգղիոյ տէրութեան տակ։ Այս հեռաւոր կղզւոյն վրայ տեղեկութիւն ունենալը թէպէտ առ այժմ մեր ընթերցողաց կարեւոր բան մը չերեւիր. որ աւելի կուզեն մօտաւոր երկիրներու և ազգերու հնութեանց վրայ տեղեկութիւն ունենալ. բայց ինչպէս որ ըսելիքներէս պիտի տեսնուի, բնիկ ծագումնին արեւելեան հարաւակողմէն ըլլալով Ասիայի ազգերէն քանի մի սովորութիւններ ծնացած է մէջերնին. ուստի այս տեղս համառօտ տեղեկութիւն մը տալը պատշաճ սեպեցինք։

Իռլանտացիք իրենց մասնաւոր լեզու մը ունին զոր մինչեւ հիմայ գործ կածեն, որ ո՛չ Անգղիայւոց և ո՛չ Եւրոպայի ուրիշ ազգաց լեզուներուն կը նմանի. ուրիշ կողմեր ալ այս լեզուն խօսող ազգ չկայ. որով կղզւոյն բնակիչքը իրենց նախնեացը յիշատակը անկորուստ պահած են. քանզի ասով կիմացուի որ փիւնիկեցիներէն ծագած են և անոնց լեզուն պահած են որ հիմայ նոյն իսկ փիւնիկէի բնակիչները, որ են Պերութի և Լաոդիքիէի և Սուրի և Սայտայի և Հայֆայի և Աքեայի և այն ծովեզերքներուն մարդիկը, նոյն լեզուն բոլորովին մոռցած են, և արաբերէն կը խօսին։

Իռլանտացիները հին փիւնիկեցիներուն լեզուէն զատ հեթանոսական կրօնքին ալ պահեցին մինչեւ քրիստոնեայ եղած ժամանակնին. և այս հեթանոսական կրօնքէն ծնացած քանի մի բաներ, որ քրիստոնէութեան հետ չվիրաբանելու չափ օտարոտի չեն, պահած կը գտնուին, և մեր հոս նշանակելիքնիս ասոնք են։

Հին Իռլանտացիներուն փիւնիկեցիներէն սովրելով իբրեւ աստուած պաշտածնին էին արեւը, լուսինը, աստղերը, կրակը, ջուրը, խոշոր ծառերը և ապառաժ քարերը։ Երկնային մարմնոյ պաշտաման վրայ ըսելիք չունինք. մասնաւորապէս ծնացելոց վրայ պիտի խօսինք։

Կրակը անչէջ կը պահէին, ուրիշ կրակապաշտ ազգաց պէս. և քրիստոնէութեան ժամանակնին ալ գարնանամուտին մեծ հանդէս կը կատարէին զոր իրենց լեզուով պաւլ դիննէ կանուանէին, որ բահաղու կրակի օր ըսել է։ Մինչեւ հիմայ ասոր յիշատակը մոռցուած չէ։ Ագարակներու վարձակալները տարին անգամ մը մայիսի մէջ հողատէրներուն տարեկան տուրքը կը վճարեն. և ասոր կըսեն սիօս նա պաւլդիննէ. այսինքն՝ բա-

հաղու կրակին եկամուտը : Բահաղ , (բնիկ հնչմամբ պաւլ) փիւ-
նիկեցւոց լեզուովը տէր ըսել է . և նոյն ազգը իր պաշտած
աստուածներուն ամենէն դերագոյնը այս անունովս կը ճանչ-
նար : Կրակի տօնին օրը առջի իրիկունը որ տեղ կրակ կարնէ կը
մարէին . և հարկ էր ողջակէզի համար վառուած կրակէն նոր կը-
րակ առնել : Հին պարսիկներն ալ՝ որ կրակապաշտ էին , այս
սովորութիւնս ունէին : Այս բաներս պատմողը կըսէ որ , ասանկ
արեւելեան հին կրօնական սովորութեան մը ճնացօրդը մինչեւ
հիմայ կը տեսնուի Երուսաղէմ , ուր կարծիք մը կայ որ՝ ամէն
տարի Զատկի ճրագալոյցին իրիկունը երկինքէն կրակ կամ լոյս
կիջնայ Քրիստոսի Սուրբ գերեզմանին վրայ , և այն տեղ կա-
խուած կանթեղները կը վառէ : Այս կարծիքս հիմայ քիչերու
մէջ ճնացած է :

Կրակին կիզիչ և ապականիչ զօրութեանը նկատմամբ թէ ա-
րեւելքի և թէ՛ արեւմուտքի մոգերէն կամ քուրմերէն ոմանք
կրակը չարաստուած սեպելով Ղուրին աւելի յարգութիւն և
պաշտօն կը մատուցանէին . և Իւլանտացիք մանաւորապէս
սրբազան համարուած քանի աղբիւրներ և ջրհորներ ունէին ,
մեր լուսաղբիւր , և յունաց այազմա բսուածնուն պէս : Բայց
ասոնց հետ չխոթելու չէ՛ անանկ աղբիւրները և ջրհորները՝ ո-
րոնք հին կրօնական ստուգեալ դէպքի մը յիշատակի համար
յարգութիւն կը գտնէն . միայն թէ տրուած յարգութեան
պատճառը ճանչցուած և ստոյգ ըլլայ : Մեր նախնիքներէն
այսպէս տեսած ենք ըսելը նոյն յարգանքը չարունակելու բա-
ւական պատճառ չկրնար ըլլալ :

Անտառներուն յարգութիւն տալը կամ ասոնք սրբազան
տեղի սեպելով կրօնական պաշտամանց յատկացնելը շատ հին է .
և ինքնին աւելորդապաշտութիւն ալ չէ : Աբրահամ նահապե-
տը իր տնկած անտառին մէջ կաղօթէր (Ծննդ. իա. 33) . և Գե-
դէոն ծառի մը տակ զոհ մատոյց Աստուծոյ (Դատաւ. զ. 19) :
Հայոց նախնի հեթանոսութեան ժամանակն ալ Հայկ նահապե-
տին որդին Արամանեակ՝ սօսի (չընար) ծառերու անտառ մը
տնկած էր . ինչպէս կը կարծեմք՝ աստուածային պաշտամունք
կատարելու յատուկ տեղ մ՚ըլլալու համար . ինչպէս որ էր Աբ-
րահամ նահապետին տնկած անտառը : Ժամանակ անցնելէն ետ-
քը Արամ նահապետին թոռը Անուշաւան՝ այն սօսիներուն ան-
տառին պաշտօններուն նուիրուեցաւ իբրեւ այն տեղ կատարել

կրօնական արարողութեանց պաշտօնեայ (Խորենացի ա. 22)։ Իսրայէլացւոց Աբբաթ թագաւորին օրը և անկէց ետքն ալ ծառերու տակ պաշտօն մատուցանել կար (Գ. Թագաւ. ժը. 19)։ որ ետքերը նոյն իսկ ծառը պաշտելու փոխուեցաւ. ինչպէս կըսնէին չերքէզները մինչեւ մօտ ժամանակ. գուցէ մինչեւ հիմայ ալ անանկ ընողներ կան, շատ տեղերուն հին անուններըը անտառներու կամ ծառերու հետ համեմատութիւն ունին։ Իռլանտացի մէկ հիմայ խիստ քիչ ծառ կը գտնուի. բայց հին անուններուն մէկը՝ անտառներու կղզի էր։ Իռլանտացիք մինչեւ հիմայ սովորութիւն ունին իրենց սրբազան սեպած աղբիւրներուն կամ ջրհորներուն այցելութեան երթալ. որոց քովէ մեծ ծառ մը կամ տպառաժ մը կը գտնուի. և ետ դառնալու առենին այն ծառին ճիւղին վրայ մէկ հին լաթի մը կապէ. և կանայք իրենց մազէն քիչ մը բան կը կտրեն ու կը կախեն։ Անանկ աւելորդապաշտութիւն ունեցողները որ մեր կողմերն ալ պակաս չեն, ասանկ բան մ՚ընելու համար ամեն առեն ծառ կամ քար չեն բռնտռեր։ Իւսքիւտար չալուշ տէրէ ըսուած թաղը այգիմա մը կայ, որուն առաջը երկաթի վանդակով գոցուած էր ժամանակ մը։ Ան տեղ գայողները՝ այն վանդակին մատներուն վրայ կը կապէին հին լաթերնին կամ մազերնին։ Ասոր պատճառը Իռլանտայիներուն հարցուած ժամանակը՝ ծերերնին որ հին սովորութեանց ծագմանն աւելի տեղեկութիւն ունենալ կը կարծուին, կըսեն եղեր թէ կախարդներուն չարութենէն ազատ մնալու համար մեր նախնիքն ասանկ կընէին. մենք ալ ասանկ կընենք։ Ըսել է որ ամեն տեղ հին առենէն մնացած սովորութիւնները իրարմէ օրինակուած են. և հնութեանց հետաքրքիր անձինք այսպէս բաներու դիտողութիւն ընելով նախնի պատմութեանց վերաբերեալ այնպիսի բաներ կը գտնեն որ մարդու մտքէն չէր անցնէր։

ԱԶԳԱՅԻՆ

Ա. Ծ՛ցմարի՞ն կենաց տարերքը ազատութիւնն է :

Բ. Մահմանադրական իրաւունքը բնական ազատութեան չափն է :

Գ. Մեր Մահմանադրութիւնը անիրաւութիւն է, զի բնական ազատութեամբ չափուած չէ :

Շարունակութիւն տես Ել. 3)

Բ.

Մինչ ցայս վար կ՛ուսանիմք, թէ մարդն իւր ազատութեամբը կն է մարդ. անտի և այսր պիտի ուսանիմք, թէ մարդն յաշխարհի աստ այնչափ մարդ է, որչափ որ ըստ բնութեան ազատ է :

— Ազատութիւնը մարդոյ այն սահմանեալ իրաւունքն է, զոր բնութեան օրէնքը այնչափ կուտայ անձին, որչափ որ է անձը : Զի մարդիկ թէպէտ ծննդական տարբերօք տարբեր են ի միմեանց, և զգացման ոգւով նաեւ տարբեր կերպաւորեալ, բայց իւրաքանչիւրն իւր բնական սահմանադրական դրութեամբ ի միմեանց ո՛չ առաւել են հանդամանօք, և ո՛չ նուազ. ինչպէս են հրոյ բոցն ու նիւթը. որ երբ նիւթն աւելնայ, բոցըն կ՛աւելնայ. և երբ նիւթն պակսի, բոցն ևս կը պակսի, որով բոց ու նիւթ հաւասարակշռով մը կ՛ապրին. և որոց առաւելն ու նուազը բնական հանդամանօք միշտ համեմատ են իրեարոց :

Զի բնական հանդամանքները սկզբնական պարզ ձեւով նոյնն են, և հաւասար. իսկ բաղադրական ձեւով տարբեր, և անհաւասար :

Ա.յս բաղադրական ձեւոյ տարբերութիւնն ու անհաւասարութիւնն բնութեան արդարութիւնն է. զի չատին չատ՝ և քիչին քիչ կը կշռէ. իսկ նոյն ձեւոյ անտարբերութիւնն ու հաւասարութիւնը բնութեան անիրաւութիւնն է, զի քիչն ու չատը հաւասար կը համարի, և չատին իրաւունքը պակաս կը կշռէ. զի. եթէ հինգ անձէ բաղկացեալ մէկ տան հինգ խնձոր տանք, տան անձէ բաղկացեալ մէկ տան տասն խնձոր տալն է արդարութիւն. այսինքն մէն մի անձի մէն մի խնձոր՝ հաւասար բաժանմամբ. որք ըստ բաղադրականին թէպէտ տարբեր են՝ և անհաւասար. բայց ըստ պարզութեան նոյնն են՝ և հաւասար : Իսկ եթէ հինգ անձէ բաղկացեալ մէկ տան

հինգ խնձոր տանք, տասն անձէ բաղկացեալ մէկ տան ևս հինգ խնձոր տանք, այն անիրաւութիւն է. որովհետեւ մէկ տան հինգ անձերը մէկ մէկ խնձոր կունենան, և միւս տան տասն անձերը կէս կէս խնձոր. որք ո՛չ միայն ըստ բաղադրականին տարբերը կըլլան՝ և անհաւասար, այլ ըստ պարզութեան տարբեր՝ և անհաւասար, որով բնական հանգամանաց համեմատական հաւասարակշռութիւնը կը կորսուի, և կըլլայ անիրաւութիւն, և բնութեան օրինաց սահմանած անհատական իրաւունքը՝ այն է ազատութիւնը կը բռնաբարի: Հաւասարութիւնը՝ ինչպէս ըսինք, բնական հանգամանաց համեմատաութեանը օրինօք չափուելով կըլլայ արդարութիւն: Բնական օրինաց ուսումն այն է, թէ հաւասարութիւնը ծննդական հեղինակութեամբ մարդուս գոյացական ծաւալէն կը չափուի, և ազատութիւնը նորա բնական զօրութենէն. որով հաւասարական իրաւունքը ֆիզիգապէս այնչափ կը ծաւալի, որչափ որ գոյացութիւնը կը ծաւալի ըստ բնութեան. և ազատական իրաւունքն բարոյապէս այնչափ կը ծաւալի, որչափ որ զօրութիւնը կը ծաւալի ըստ բնութեան:

Աստի ուղղապէս սկիզբն կ՛առնու մարդոյ բնական սահմանադրական հաւասարութիւնը՝ ու ազատութիւնը:

Աստի կ՛սկսի այն գիտութիւնը, թէ սրատես մը՝ գիտուն մը՝ զգայուն մը ինչ որ են, կարճատես մը՝ տգէտ մը՝ և անըզգայ մը նոյնը չըլլալով միմեանց անհաւասար են. վասն զի բնական հանգամանքնին միմեանց անհաւասար են. որով միշտ անհաւասար կը մնան բնական իրաւանց՝ այն է ազատութեան մէջ. այս ճշմարտութիւնը կը հաստատուի սա գեղեցիկ օրինակով ալ թէ « սահման (իրաւունք) քալին ղէնք (զօրութիւն) իւր, որչափ հատանէ (ծաւալի) այնչափ ունի (լինի ազատութիւնն) »

Ահա՛ հոս ևս կը ճշմարտի, թէ ամեն ոք միմեանց հաւասար իրաւունք չունին, թէ ամեն ոք միմեանց հաւասար ազատ չեն, և թէ ամեն ոք միմեանց հաւասար մարդ չեն:

Բայց աստի, տիեզերաց մատենին մէջ կը տեսնեմք, որ արեւը իւր համաստարած գոյութեամբը երկրագունդը կը լուսաւորէ, իսկ ճրագը իւրովի փոքրիկ մատաղ մը խաւարը միայն կը փարատէ:

Գետը իւր բազմազեղ յորդութեամբը ընդարձակ երկիրները

ողողելու՝ և մինչ ի ծովս ընթանալու զօրութեամբ հեղինակեալ է. իսկ վտակը մարգագետայ մէջ երկրին ծարաւութեամբն անհետանալու սահմանուած է։

Արծիւը տիեզերայ անհուն տարածութեանը մէջ կը սաւառնի. իսկ ճանճը անձուկ ասպարէզ մը միայն կը չափէ. ո՛րոց ամենքն ալ ըստ դոյացական ծաւալման՝ և ըստ բնական զօրութեան ի միմեանց ո՛չ առաւել են հանգամանօք, և ոչ նուազ։ Ա՛յս տեսութեան ճշմարտութիւնն այն է, թէ երբ անհուն ճրագներ միանալով ծաւալին արեւու չափ ընեն, արեւու կը հաւասարին։

Եւ եթէ արեւը անհուն ճրագներու բաժնուելով ծաւալը ճրագներու չափ ընէ, ճրագի կը հաւասարի։ Թէ երբ անհուն առուակներ միանալով ծաւալին գետի չափ ընեն, գետի կը հաւասարին, և եթէ գետը անհուն առուակներու բաժնուելով ծաւալը առուակի չափ ընէ, առուակի կը հաւասարի, որով մէկ արեւը իրր անհուն ճրագներ, կամ անհուն ճրագներ իրր մէկ արեւ նկատելով, կամ մէկ գետը անհուն առուակներ, կամ անհուն առուակները մէկ գետ համարելով բնական հանգամանաց՝ այն է դոյացական ծաւալման չափերնին կը հաւասարակշռի, և կըլլայ սկզբնական պարզ ձեւով նոյնն՝ և հաւասար, և բազադրական ձեւով տարբեր և անհաւասար։

Ա՛յսպիսեաւ էութեան մը դոյացական ծաւալը և բնական զօրութիւնը որչափ որ տարածի, բնական իրաւունքն՝ ու ազատութիւնը հաւասարապէս կը տարածի, և այն աստեն սահմանագրական իրաւունքը բնական ազատութեան չափը կըլլայ։

Շարունակելի

Սեմն Հ. Մ. Ֆելեկեան

ԱՌՈՂՋԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱՉՆՈՒԹԻՒՆ

Եթէ մարդկային սեռին ընդհանրութեան վրայ ուշիմ քննութիւն մը ընենք, զանի երկու դասի բաժնուած կգտնեմք կըսէ, գաղղիացի Առողջաբան Միշէլլվի. Ա. դասին կվերաբերի գործաւորն որ դատապարտեալ է աշխատութեան հապիւ օրօրոցէն գուրս ելած, միայն նիւթական այսինքն մարմնական աշխատութեան իբրեւ թէ նախասահմանեալ, խորհելու խոկալու յատկութիւն կամ ուղեղ ունենալը մոռցուած է. իսկ հարուստին զաւակը միայն մտաւորական աշխատութեան մէջ մեծնալով, հազիւ ժամանակ կունենայ մարմինը կրթելու, ուսկից կերեւի մէկ կողմէն կոչտ ու կոպիտ զօրաւոր մարմիններ, առանց իմացական առաջնորդի. միւս կողմանէ իմացականութիւններ առանց ֆիզիքական և բարոյական զօրութեան և ուժի, և երբեմն ալ հիւանդ մարմնով թմրեալ ուղեղներ. ցաւալի և տխուր վիճակ, կրկնակի դժբաղդութիւն թէ անհատից և թէ մարդկային ընկերութեան:

Եւ ինչ է պատճառ այս կրկնակի դժբաղդութեան. որովհետեւ թէ ծնողք և թէ ուսուցիչք. ընդհանրապէս տգէտ են թէ առողջաբանութեան և թէ բնաւորութեան կողմանէ: Այս նպատակաւ կըսէ, Պուիէռ տը Պուամօն, գաղղիացի, հռչակաւոր բժիշկն, արդարեւ ցաւալի է մտածել. թէ մարդիկ այնքան անօգուտ բաներ և խիստ դիւրաւ մոռնալու ուսմունքներ սովրեցնելու կաշխատին, առանց բնաղինութեան և առողջաբանութեան ամենէն նախնական սկզբանց, որոյ պատճառ ամեն օր շատ գրագիրք ամենածանր սխալանաց մէջ կիյնան անդիտաբար և յանկամայս: Այս տգիտութիւնը (բնաղինական և Առողջաբանական) շատ վնասակար հետեւանքներ ունի յաղագս ժառանգութեան, թէ դաստիարակութեան, թէ ըստ օրինի պատժոյ դատապարտութեան նկատմամբ, որովհետեւ առաջին պարագային մէջ, ապագային համար պէտք եղած և կարեւոր զգուշութիւններն ի գործ դնելը կարգիլու. և երկրորդին մէջ կմոռնին պարագաները նկատողութեան առնելու:

Առողջաբանութիւնն և բնաղինութիւնն այնպիսի կարեւոր դիտութիւններ են. որք ոչ միայն արական սեռին անհրաժեշտ են, այլ և կանանց, այսինքն իգական, գեղեցիկ սեռին, ինչպէս

կապացուցանէ , Գերմանացի , Վիւչով , հռչակաւոր և հանրածանօթ հատարակապետական կարմիր ազատամիտ բժիշկն :

Ցան մը խոհանոցն , ըստ պատշաճի կառավարելու համար , պէտք է որ կինը գիտնայ թէ կերակրոց որը դիւրամարս և որը դժուարամարս է : Ընդհանրապէս կին մը զայս կսովրի ժամանակաւ և փորձառութեամբ . այս առթիւ ընտանեաց անդամներէն մէկ քանիներ մէկ քանի անգամ իրենց ստամոքսի մարսողական պաշտօնները կխանգարեն , բայց այս տկարութեան պատճառը , նոյն ինքն կինն ալ չգիտեր . ուրիշ անգամ , կրկին մի և նոյնը կպատահի , և նոր փորձեր պէտք պիտի ըլլան , տանը կինը լուսաւորելու թէ , անոնք որ ստամոքսի տկարութիւն ունեցան , պատճառը կերած կերակուրնին է : Ա յս փորձերը չեն բաւականանար նորա սովրեցնել այն կանոններն որոնցմով պէտք են կերակուրները պատրաստել : Ա յսպէս , այն ամեն կերակուրք որք դիւրամարս են , ստամոքսը չեն խանգարեր , այս յատկութեամբ , այսինքն կերակուր մը դիւրամարս ըլլալով , միանգամայն սննդարար չկրնար ըլլալ , այսինքն արեան մէջ խառնուիլ , մարմինը սնուցանելու և ուժ տալու : Կան կերակուրներ որք դիւրամարս ըլլալով , ընտասակար են , կան նաեւս որք դիւրամարս բայց անսննդունդ ըլլալով , ընտասակար չեն ալ նէ , անօգուտ են : Որչափ անգամ , փոքր տղայոց կերակուրները դէշ կընտրուին : Որչա՛փ երիտասարդ մայրեր , ամեն օր այս տեսակ պակասութեանց մէջ կկրնան , և պատճառ կըլլան հետեւաբար իրենց տուընոյն , զաւակաց , մէկ խօսքով բոլոր ընտանեաց հիւանդանալուն : Որչափ կերակուրներ , առանց ընտրութեան և զգուշութեան ուտուելով , որչափ հիւանդութիւններ ծնած են . կծնին և պիտի ծնին միշտ :

Ա յս մասին պէտք եղած ամենէն պարզ տեղեկութիւնները գիտնալու համար , պէտք է դէթ սովրիլ թէ ինչպէ՛ս չինուած է ստամոքս մը , ի՛նչպէս կմարսե կերակուր մը , կերուածին և խմուածին բաղադրութիւնն ի՛նչ է , ի՛նչ կըլլան նոքա , մարդուս մարմնոյն մէջ , ի՛նչ բանի , նպատակի կծառայեն և այլն :

Նոյնպէս է նաեւ յմարմինն ի՛նչ աստիճան տաք պահելու , հոգնեցնելու և այլն վերաբերեալ խնդիրներն :

Երիտասարդ մայր մը կըսէ , Վիւչով , աւելի վստահութեամբ պիտի խնամէ իր նորածին զաւակն , եթէ փորձն իր առաջին զաւկին վրայ չըներ :

Տնտեսական գիտութիւնք ամեն օր կատարելագնեն դպրոցայ մէջ, իսկ տնական կարեւոր գիտելիք բոլորովին զանց առնուած են։ Աշխարհագրութիւնը, պատմութիւնն, իրենց ամենէն մանրամասն տեղեկութիւններն աղջկանց կդասախօսեն. իսկ կենաց, ընտանեկան ամենակարեւոր խիստ կարեւոր գիտելիքներն անծանօթ կմնան»։

Մի եւ նոյնը կը քարոզէ, նաեւ, մեր դաստատուն Պուշարատայ. «մեր երիտասարդ օրիորդք, կըսէ, մեր բոլոր թագաւորաց ծննդոց եւ մահուան ճիշդ թուականը գիտեն. բայց եւ ոչ մէկը գիտէ կաթին որպիսութիւնը, զանի առաւօտուն խըմելու ատեն, նոյնպէս մսին եւ կանանչեղինաց»։

Կենաց այս գիտութիւնը, բնաշնութիւնը մարդուս դաստիարակութեան հիմն ըլլալով, պէտք չէ աւելցնել նաեւ թէ ինչպէս արու եւ եգ սեռին անհրաժեշտ է, անհրաժեշտ է նաեւ կղերական դասուն, ինչպէս կապացուցանէ նաեւ Պօսուէ, Գաղղիացի բնազիւնը, փիլիսոփան և հռչակաւոր եպիսկոպոսն։

Ամեն մարդ նպատակաւ և՝ սքանչելի արհեստիւ մը չինուած է. . . . կըսէ։

Մարդուս կազմուածքին ամեն մէկ մասն անդամը, նպատակաւ մը չինուած է, ինչո՞ւ համար սիրտն, ինչու համար ուղեղն, ինչո՞ւ համար իմացականութիւնն, ինչո՞ւ համար մաղձն, ինչո՞ւ համար արիւնն, և ինչո՞ւ համար միւս հեղուկներն։ Ո՛վ կրնայ ըսել թէ արիւնը մարդս սնուցանելու չծառայեր, թէ սառամքան և թէ անոր մէջ ծնուած առնոտները չեն ծառայեր մարսողութեան և արիւն չինելու. թէ երակք չե՞ն չինուած սեւ և կարմիր արիւնները պարունակելու, զանի մարմնոյն ամեն կողմը պտտցնելու, և սննդարար հեղուկը հոլան ընելու։ Ո՛վ կրնայ ըսել թէ լեզուն և շրթունք, իրենց ամեն տեսակ շարժուձեւերովը, չեն չինուած ձայն և խօսքյօրինելու. կամ թէ լեզուն այնպիսի կողմ և դիրք մը մէջ չէ դրուած, կերակուրն առաջմքին մէջ տանելու. թէ ակռայներն որոնց թիւն 32 է, տեսակին չորս և ձեւերնին երեք, չեն փուսած կերածնիս կտրելու, կոտրելու և փշրելու. թէ ըղձուկնքը չծառայեր կերածնիս խմորի դարցնելու, կակուղցնելու։ Այն որ ատոնք ճանաչել, ընդունել չուզէր, պէտք է ըսէ նաեւ թէ տուն մը չծառայէր մարդոց բնակութեան, և թէ տան մը սենեակներն անօգուտ են մարդուս հանգիստ ապրելուն. այնպիսին ապուշ և տխմար պէտք է կոչել»։

Այս առթիւ, կըսէ նաեւ Շէօբօլա Ռիւօ, թէ բնաղննութիւնն և հոգեբանութիւնն անզատուելի են իրարմէ. մէկն առանց միւսի անկատար է. մէկը միւսով մարդկաբանութիւնը կամ մարդկային դիտութիւնը կ'յօրինէ։ Առաջնները փիլիսոփայ ըլլալը խիստ դիւրին է եղեր, ամեն ոք ըստ քմեայ կ'քարոզէր հոգեբանութեան ամենէն դժուար խնդիրներն առանց գիտնալու անդամազննութիւնն և ուղեղին պաշտօններն, առանց գիտնալու մարդկային կազմուածքն և իր գոյութեան պայմանքն»։

Արդարեւ 1866 թուականէն սկսեալ Գաղղիոյ կղերական հասարակաց բոլոր դպրոցաց մէջ, բնաղննութիւնն և Առողջաբանութիւնը կդասախօսուի, հանդերձ անդամազննութեամբ, որոնցմով կարող են կղերականք, հետզհետէ ժողովրդեան աւելորդապաշտութիւնները, սխալ կարծիքներն ուղղել և փառատել և այլն։

Ցուսով որ մինչեւ ցարդ խօսածնիս բաւ է համոզել բընաղննութեան և Առողջաբանութեան որչա՛փ կարեւոր ըլլալն, և ապացուցանել միանդամայն թէ սոքա պէտք են լինել, մարդկային սեռին դաստիարակութեան հիմն, թէ աշխարհական, թէ կղերական, թէ հայր, թէ մայր, թէ ուսուցիչ, թէ դաստիարակ ըլլայ մարդս, բոլոր ասոնք իրենց պաշտօնն անկարող են կատարել ինչպէս որ կ'ապացուցանեն ամեն օր այս անհրաժեշտ եղող գիտութեանց տգիտութենէն ծնունդ առած սխալները, պակասութիւնք, նախապաշարմունք և հետեւաբար ամեն տեսակ հիւանդութիւնք որք յառաջ կուգան։

Եթէ ըսինք թէ ժողովրդոց դաստիարակութեան հիմն բընաղննութիւնն, այսինքն առողջ մարդուն գիտութիւնն (ինչպէս կկոչէ Կաիլօլ, Գաղղիացի բժիշկն), այս իրաւամբ է թէ համոզուած ենք թէ մարդս չապրիր, ինչպէս որ պէտք է ապրիլ, այսինքն իր կազմուածքին օրինաց և իր մարմնոյն պաշտօններուն համեմատ. որովհետեւ բնաղննութիւնը, հիմն է նաեւ Առողջաբանութեան, մարդկային սեռը լուսաւորող, քաղաքակրթող այս գիտութիւնն, որ կսովրեցնէ ինչպէս գիտեն ընթերցողք, առողջութիւնը պահել, որ կփոխուի ոչ միայն ազնաղան քաղաքաց հետ, այլ և ամեն անհատի, ամեն հասակի, և ամեն արհեստի հետ, որով կրնանք հետեւցնել թէ Առողջաբանութիւնն առանց բնաղննութեան անկատար անվախճան և առանց ապագայի է, որոյ ապագոյց կրնան ըլլալ թէ նախ-

նեաց և թէ նոյն ինքն Առողջաբանութեան պատմութիւնք ։

Նաև մի, նաւապետի մը յանձնուելու ատեն, նաւապետին կը պահանջուի թէ արդեօք գիտէ և կճանաչէ աստեղց չարժումը, հողմոց դիրքն ու փչումը, ջուրց վազումը նոյնպէս մեքենագործին ալ շոգենաւին կամ շոգեկառքին մեքենային յանձնուելու ատեն, կանխաւ կփորձեն թէ արդեօք գիտէ, շոգիին ճնշման, ձկտման, առաջկութեան, ուժի և զօրութեան օրէնքները, մեքենային զանազան մասանց կարգումը, նոցա դառնցըն ու չարժումները։ Մէկ խօսքով յայտնի է թէ, մարդս ինչ արհեստի ալ ծառայէ, վարպետ չեղած, ստիպեալ է մէկ քանի տարիներ նոյն արհեստը գիտցող վարպետի մը քով աշակերտել. եթէ ժամայոյցնիս աւրուի կամ չբանի, զանի ժամագործի մը կ յանձնենք և ոչ թէ դերձակին, որովհետեւ ժամագործը միայն կարող է գիտնալ և դանել ժամայոյցին չբանելուն կամ կայնելուն պատճառն և հետեւաբար պէտք եղածն ի գործ դնել, զանի բանեցնելու ։

Վասնորոյ յօդուածնիս վերջացնելու համար կհարցնենք թէ, մարդս ալ ինչո՞ւ համար ամէն բանէ առաջ իր մարմինը չճանչնայ ։ որնոր մեքենայից մեքենան է. ինչպէս կարելի է սոյն մեքենային ներդաշնակաւորութիւնն այսինքն առողջութիւնը պահել, առանց գիտնալու մարմնոյն բաղադրութիւնն, իր անդամոց կտորներուն և պաշտօններուն չարժմունքն և ընթացքն, այսինքն առանց բնաղննութեան, որ կսովրեցնէ մարդուս թէ ինչ պէտք է ընել, և ոչ թէ ինչ որ կուզէ ։ կարելի՛ է արդեօք բնաղննութենէն աւելի օգտակար գիտութիւն մը գտնալ մարդկային վիճակը բարւոքելու և աղգաց երջանկութիւնն աւելցընելու. նոյնպէս Առողջաբանութիւնը քաղաքակրթող սոյն պատկն աշխարհիս ամէն կողմերը տարածել, և ամէն մարդու անխտրաբար ամա բառը հազիւ արտասանած, անմիջապէս յետոյ, ըսել տալ, ինչ, ամենեքեանս եղբայր կմ ։